



Ղեկավարների 34.2%-ը լիովին բավարարված է իրենց կազմակերպության և հարկային մարմինների հետ փոխհարաբերություններից, 32.9%-ը լիովին բավարարված է վերադաս/հիմնադիր կառույցի հետ փոխհարաբերություններից: Մասամբ բավարարված են համապատասխանաբար 31.5%-ը և 26.4%-ը: Եվ բավարարված չեն՝ 34.3%-ը և 11.8%-ը: Ղեկավարների 28.9%-ը պատասխանից բխում է, որ իրենց կազմակերպությունը չունի վերադաս/հիմնադիր կառույց:




Գծանկար թիվ 27. Հարկային մարմինների հետ փոխհարաբերությունները




Գծանկար թիվ 28. Վերադաս/հիմնադիր կառույցի հետ փոխհարաբերությունները

Աշխատակիցների բաշխվածությունը ըստ սեռի, տարիքի, ինչպես նաև կրթության.


Ռեսպոնդենտների 2.3%-ը մինչև 25 տարեկան են, 29.5%՝ 26-35 տարեկան, 36.4%՝ 36-50 տարեկան, 27.3%՝ 51-60 տարեկան և 4.5%-ը 61 տարեկան և բարձր են: Ռեսպոնդենտների 57.5% տղամարդ են, 42.5%՝ կին: Թերի միջնակարգ կրթություն ունեն ռեսպոնդենտների 2.2%, միջնակարգ կրթություն՝ 11.4%, միջն. մասնագիտական՝ 18.2% և բարձրագույն կրթություն՝ 68.2%:



Գծանկար 29. Տարիքը




Գծանկար 30. Սեռը




Գծանկար 31. Կրթությունը

Ղեկավարների բաշխվածությունը ըստ սեռի, տարիքի, ինչպես նաև կրթության.


Ռեսպոնդենտների 11.6%-ը մինչև 25 տարեկան են, 9.3%՝ 26-35 տարեկան, 34.9%՝ 36-50 տարեկան, 41.9%՝ 51-60 տարեկան և 2.3%-ը 61 տարեկան և բարձր են: Ռեսպոնդենտների 66.7% տղամարդ են, 33.3%՝ կին: Թերի միջնակարգ կրթություն ունեն ռեսպոնդենտների 0%, միջնակարգ կրթություն՝ 7.0%, միջն. մասնագիտական՝ 9.3% և բարձրագույն կրթություն՝ 83.7%:



Գծանկար 32. Տարիքը



Գծանկար 33. Սեռը



Գծանկար 34. Կրթությունը

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.


ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՏԱՐ ՃՅՈՒՂԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես ցույց է տալիս վերջին տասնամյակների փորձը, արդյունաբերության գիտատար ճյուղերում բոլորային առաջընթացի ամենահուսալի միջոցը նորարարությունների իրականացումն է: Վերջին տասնամյակում բազմաթիվ հետազոտողներ իրենց ուսումնասիրություններում հիմնավորում են, որ ոչ բոլոր նորարարական նախագծերը կարող են հաջողությամբ պսակվել՝ անկախ կառավարիչների գործադրած ջանքերի: Այսինքն՝ «անհաջողակ» կառավարիչներին «պատժելու» քաղաքականությունը ոչ միայն սխալ է, այլև լրջորեն

արգելակում է նորարարությունների ակտիվ իրականացումը, քանի որ ոլորտում ներգրավված աշխատողները խոստովում են խոստումնալից, սակայն ռիսկային որոշումներ կայացնելուց:

Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, միջին որակի նորարարական ծրագրերում հաջողություն է սպասվում 10-ից միայն մեկ դեպքում¹: Չնայած նորարարությունների անորոշ և ռիսկային բնույթին՝ բոլորովին էլ չի կարելի եզրակացնել, թե դրանք կարելի է թողնել ինքնահոսի: Ավելին, ստեղծված նոր վերաբերմունքին համահունչ նորարարական քաղաքականության իրականացման համակարգի ստեղծման անհրաժեշտությունից ելնելով՝ անհրաժեշտ է վերլուծել նորարարական գործընթացի ընթացքը և մշակել համապատասխան կազմակերպչական կառուցվածք՝ այն հնարավորինս արդյունավետ իրականացնելու համար:

Նորարարական քաղաքականության քննարկման ժամանակ դեռևս գերիշխող է այն սկզբունքը, որ նորարարությունը անընդհատ-հաջորդական գործընթաց է: Գործնականում գոյություն չունի համընդհանուր ընդունված մոտեցում նորարարական գործընթացի՝ փուլերի բաժանման վերաբերյալ: Չնայած տարբեր հեղինակների կողմից նորարարությունը որպես գործընթաց ներկայացման համընդհանուր միտումին՝ տարբեր հեղինակներ այստեղ առանձնացնում են տարբեր փուլեր: Նկարագրված բոլոր սխեմաներն էլ ընթանում են միևնույն սկզբունքով. նորարարության ծնունդը կապվում է գաղափարի հասունացմամբ և ավարտվում նորարարության ներդրման հաջողությամբ կամ անկմամբ: Ասվածը կարելի է ներկայացնել սխեմատիկորեն հետևյալ կերպ):



Գծանկար 1. Նորարարությունը որպես հաջորդական գործընթաց

Վերջին տարիներին նկատվում է նորարարությունը որպես անընդհատ գործընթաց ներկայացնելու կողմնակիցների աճ, և սխեման լրացվում է հետադարձ կապի ինֆորմացիոն հոսքով (Գծանկար 1-ում պատկերված է կետագծերով):

Ինֆորմացիոն հետադարձ հոսքով լրացված նորարարական քաղաքականության այսպիսի առաջադրումը առաջին հայացքից բավարարում է ժամանակակից պահանջներին: Այնուամենայնիվ, արդյունաբերության գիտատար ճյուղերը պահանջում են ավելի դիմամիկ կառուցվածք, ինչը ստիպում է ոլորտը ներկայացնող ձեռնարկություններին շատ հարցերում ունենալ հատուկ մոտեցումներ: Ներկայացված սխեմատիկ պատկերում պահպանվում են գծային-հաջորդական գործընթացին բնորոշ հատկությունները, իսկ ավելի խոր վերլուծությամբ կարելի է համոզվել, որ նման առաջադրումը ոչ թե անընդհատ գործընթաց է, այլ անընդհատ կրկնվող հերթական գործընթացների շարան:

Նորարարական քաղաքականության իրականացման որակը նշանակալիորեն կախված է այն հանգամանքից, թե ինչպես է կազմակերպված դրա իրականացման գործընթացը: Տնտեսվարող ձեռնարկություններում նորարարական գործունեության հիմնական թերություններից են.

- Պոտենցիալ մեծ հեռանկար և արդյունավետություն ունեցող նորարարությունները կյանքի չեն կոչվում կամ իրականացվում են մեծ ուշացումով:
- Ներդրում են այնպիսի նորարարություններ, որոնք չունեն անհրաժեշտ ներուժ: Նման ներդրումների պատճառն այն է, որ սխալ է իրականացվել գնահատումը, կամ եղել են ոչ տնտեսական շարժառիթներ:
- Ներդրված նորարարությունները ենթարկվում են ներքին բացահայտ կամ թաքնված հակազդեցության: Նման նորարարությունները սովորաբար սպասված արդյունքի չեն հասցնում:
- Նորարարությունների ներդրումը պահանջում է ավելի շատ ռեսուրսներ, քան պլանավորվել էր նախապես:

Նշված թերությունների պատճառով առաջացած բացասական հետևանքների ազդեցության տակ նախորդ դարի 80-ական թթ. գիտատեխնիկական բուռն զարգացմանը զուգահեռ արդյունաբերության գիտատար

¹ Perrin B. How to - and How Not to - Evaluate Innovation. Evaluation, 2002, 8, pp13-28.

ցյուղերում նկատվեց անցում դեպի կառավարման այնպիսի մոր համակարգերի, որոնց հիմնական առանձնահատկությունը նորարարական գործընթացի՝ որպես ինքնուրույն կառավարման առարկայի, ներկայացնելն էր: Դա ենթադրում էր.

- ձեռնարկության բարձրագույն մակարդակում մասնագիտացված ստորաբաժանումների ստեղծում (խորհուրդներ, կոմիտեներ, աշխատանքային խմբեր), որոնք ամփոփապես զբաղվելու էին գիտատեխնիկական քաղաքականության մշակմամբ: Նման ստորաբաժանումներ հիմնականում ստեղծվում են խոշոր ձեռնարկություններում, որոնց հիմնական խնդիրը նորարարական քաղաքականության սկզբունքային ուղղությունների որոշումն է, ինչպես նաև ձեռնարկության բարձրագույն մարմնին կոնկրետ առաջարկների ներկայացումը: Սովորաբար նման խմբերի կազմի մեջ են մտնում տարբեր արտադրական ստորաբաժանումների, կենտրոնական ծառայությունների ղեկավարները,
- կենտրոնացված ծառայությունների ստեղծում, որոնց հիմնական նպատակը տարբեր ստորաբաժանումներում իրականացվող նորարարական գործունեության կոորդինացումն է,
- նպատակային նախագծային խմբերի առանձնացում՝ նոր արտադրատեսակների մշակման աշխատանքներով զբաղվելու համար
- ձեռնարկության կազմում գտնվող գիտատեխնիկական բաժանումների, լաբորատորիաների, գիտական կենտրոնների դերի և իրավասությունների մեծացում,
- նորարարական գործունեության խթանման նպատակով վենչուրային և հատուկ ֆոնդերի ստեղծում,
- նորարարությունների բնագավառում խորհրդատվական և տեղեկատվական օգնության կազմակերպում,
- նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի յուրացմանն ուղղված լաբորատորիաների ստեղծում և այլն¹:

Հաշվի առնելով, որ Հայաստանում խոշոր գիտաարդյունաբերական ձեռնարկություններ չկան (միջազգային չափանիշերով), ինչպես նաև այն հանգամանքը, որ առկա է ֆինանսական միջոցների սակավություն, ՀՀ ձեռնարկություններում նպատակահարմար չէ ունենալ նշված յուրաքանչյուր գործառույթի համար առանձին ստորաբաժանում: Ժամանակակից գիտատար արդյունաբերությունը ներկայացնող ձեռնարկությունում հաջողություն ունենալու համար առաջարկվում է նորարարական քաղաքականության իրականացման նոր սկզբունքային սխեմա, որն իր մեջ պետք է ներառի ժամանակակից շուկայական հրամաններին համահունչ գաղափարներ՝ միևնույն ժամանակ համապատասխանելով հայաստանյան իրականությանը (Գծանկար 2):


Առաջարկվող մոդելում առաջնային դիրք է զբաղում շուկան: Միայն շուկայի թելադրանքով հիմնավորված նորարարական քաղաքականությունը կարող է հաջողություն ունենալ: Շուկայի մասնակիցների կողմից առաջադրվող պահանջների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել հեռանկարային ուղղություններ և մշակել նորարարական քաղաքականության ելակետային օղակը՝ նորարարության գաղափարը: Նորարարության գաղափարի ծննդից սկսած՝ նորարարության հետագա ծակատագիրը որոշվում է ձեռնարկության ներսում նորարարական քաղաքականությունն իրականացնող օղակի կողմից, որը առաջարկվող կառուցվածքային սխեմայում զբաղում է կենտրոնական դիրք: Նորարարական քաղաքականությունն իրականացնող կենտրոնական օղակը նորարարական գործընթացի յուրաքանչյուր փուլից ստացվող օպերատիվ տեղեկատվության, ինչպես նաև շուկայից, պետական մարմիններից, գործընկերներից, ձեռնարկության ներքին միջավայրից և ֆինանսական շուկաներից ստացվող տեղեկատվության հիման վրա որոշում է, թե արդյոք գործընթացը պատրաստ է անցնել հաջորդ փուլ և, ընդհանրապես, նպատակահարմար է արդյոք շարունակել նախագծի իրականացումը: Նորացված տեղեկատվության հիման վրա նախագիծը ոչ միայն կարող է վերադարձվել միևնույն փուլ, այլ նաև ավելի վաղ փուլ՝ վերամշակման և ձևափոխման համար: Շուկայական պայմաններն իրենց բնույթով խիստ փոփոխական են, այսինքն՝ եթե նորարարության սկզբնական փուլերում շուկայում առկա էր հստակ արտահայտված սպառողական պահանջ, դա դեռևս չի նշանակում, որ ավարտական փուլում նման իրավիճակը պահպանված կլինի, իսկ նորարարության հաջողությունը՝ երաշխավորված: Դեռ ավելին, նորարարությունը կարող է կիրառություն գտնել այնպիսի ոլորտում, որի մասին նախկինում չէր էլ ենթադրվում:

Առաջադրված գաղափարի՝ նորարարական քաղաքականություն իրականացնող օղակի կողմից հավանության արժանանալու դեպքում սկսվում է ինֆորմացիոն բազայի ձևավորման փուլը: Այս փուլում իրականացվում է առաջադրվող նորարարության վերաբերյալ առկա տեղեկատվության հավաքման գործընթացը, մասնավորապես՝ օրենսդրական և իրավական խնդիրները, մրցակից և գործընկեր կառույցներում խնդրի վերաբերյալ մոտեցումներն ու տեխնոլոգիաները, ձեռնարկության ներքին ռեսուրսներն ու հնարավորությունները, հնարավոր շուկայական ռիսկերը, կանխատեսումները: Մի կողմից այս փուլը պահանջում է հնարավորինս արագ վերլուծություն՝ պոտենցիալ մրցակիցներից առաջ անցնելու նպատակով, մյուս կողմից փուլում թույլ տված սխալը կարող է վճռորոշ լինել հաջողության հասնելու տեսանկյունից:

Հաջորդ՝ նորարարության մշակման փուլում, սկսվում է նորարարության բուն գործընթացը: Հարկ է նշել, որ այս փուլը կարող է լինել բավականին երկարատև, պահանջել գիտական նոր հետազոտություններ, որոշակի ճշգրտումներ, այնպես որ փուլի իրականացման ընթացքում պարբերական են քաղաքականությունն իրականացնող կենտրոնական օղակի հետ ինֆորմացիոն փոխանակումները: Հնարավոր են այնպիսի զարգացումներ, որոնց դեպքում նախագիծը կկասեցվի կամ կսառեցվի: Փուլի ավարտին արդեն նորարարությունը որոշակիանում է ապրանքային նորարարության դեպքում՝ մուշի, տեխնոլոգիականի դեպքում՝ տեխնոլոգիայի, կառավարչականի դեպքում՝ կառավարչական մեխանիզմի տեսքով:

¹ Герчикова И.Н.. Менеджмент. Учебник, третье издание, переработанное и дополненное. М., ЮНИТИ 2000, 499 с. Менеджмент организации. Учебное пособие под ред Румянцевой З.П., М., ИНФРА-М 1997, 429 с.

Մեմբերներ: Յու.Մ. Սովարյան ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ: Եր., Տնտեսագետ 2002, 560 էջ:



Գծանկար 2. Նորարարական քաղաքականության իրականացման առաջարկվող սխեման

Կենտրոնական օղակի կողմից բավարար հետազոտված համարվելու պարագայում նորարարությունը ենթարկվում է մանրամասն ֆինանսատնտեսական ուսումնասիրության: Հաշվի են առնվում սպասվող դրամական հոսքերը, տեղեկատվական բազայից ստացված կանխատեսումների և միտումների հիման վրա իրականացվում է նորարարության արդյունավետության, ռիսկայնության, ռիսկի նվազեցման վերլուծություն: Հարկ է նշել, որ անցումային երկրներում նորարարությունների և, ընդհանրապես, բիզնես մախազների գնահատումը դեռևս կայացման փուլում է: Զարգացած երկրներում առկա գործիքները տարիներ շարունակ կիրառվել են և գործնականում ցույց տվել իրենց կենսունակությունը: Այնուամենայնիվ, մասն գործիքների կիրառումը օժտված է բավարար արդյունավետությամբ միայն որոշակի կայունությամբ, կանխատեսելի շուկաներում գործող ձեռնարկությունների համար, ինչը չի կարելի ասել անցումային երկրների, մասնավորապես՝ Հայաստանի դեպքում¹:

¹ Մարկոսյան Հ., «Նորարարական մախազի հիմնավորումը և ֆինանսական գնահատումը դեղագործական արդյունաբերությունում», Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, #9 (73), Օգոստոս 2006, էջ 118-121:
Մարկոսյան Հ., «Նորարարական մախազների ռիսկայնության գնահատումը»: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու – 8: Եր.: ԱԱԱԱ 2006, էջ 212-217:

Տնտեսական արդյունավետության՝ ընդունելի սահմաններում լինելու դեպքում սկսվում է նորարարության ռեսուրսաապահովման կազմակերպումը: Նախ՝ հաշվի են առնվում ձեռնարկության ներքին հնարավորությունները, առկա նյութատեխնիկական, մասնագետների, համապատասխան լիցենզիաների, արտոնագրերի և այլ ոչ նյութական ակտիվների առկայությունը: Այնուհետև սկիզբ է առնում մի գործընթաց, որը հատկապես անցումային երկրներում գործող ձեռնարկությունների համար, որպես կանոն, անխուսափելի է, բարդ և բարձր ռիսկային: Խոսքը արտաքին աղբյուրներից ռեսուրսների, մասնավորապես՝ ֆինանսական ռեսուրսների ներգրավման մասին է: Եթե զարգացած երկրներում որոշակի պատմություն ունեցող ձեռնարկությունները համապատասխան բիզնես պլանի և հիմնավորումների առկայության դեպքում առանձնապես մեծ դժվարությունների չեն հանդիպում ռեսուրսների ներգրավման գործում և հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են ֆինանսավորման այս կամ այն աղբյուրի միջև ընտրության հարցի վրա, ապա նույնը չի կարելի ասել մեր դեպքում:

Եթե այս փուլում պարզվում է, որ ձեռնարկության հնարավորությունները բավարար չեն նախագծի իրականացման համար կամ նախագծի ֆինանսական արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները չեն բավարարում ձեռնարկության պահանջներին, ապա միջոցներ են ձեռք առնվում նորարարության այլ կիրառման ուղիներ գտնելու համար, մասնավորապես՝ համատեղ ծրագրերի, նորարարության մասնակի կամ ամբողջական օտարման ձևով:

Նորարարական նախագծի ռեսուրսաապահովման դժվարին խնդրի լուծումից հետո սկսվում է դրա ամփոփական իրականացման փուլը: Ռեսուրսաապահովման՝ ձեռնարկության ներքին ռեսուրսների հաշվին իրականացված մասը անհրաժեշտության դեպքում վերափոխվում է՝ համապատասխանեցվելով նոր պահանջներին: Ներգրավված ֆինանսական և ոչ ֆինանսական ռեսուրսների համապատասխանեցումից հետո սկսվում է նորարարության իրականացումը արտադրականի դեպքում՝ ապրանքի կամ ծառայության, տեխնոլոգիականի դեպքում՝ նոր տեխնոլոգիայի, կառավարչականի դեպքում՝ նոր կառավարչական մեխանիզմի տեսքով, այսինքն՝ առաջ է գալիս նորարարական արդյունքը: Նորարարական արդյունքի՝ շուկայի համար նախատեսված լինելու դեպքում տեղի է ունենում ելք դեպի շուկա: Այս պահից սկսած՝ նորարարական քաղաքականությունը իրականացնող կենտրոնական օղակը մշակում է շուկայից ստացված արձագանքները և անհրաժեշտության դեպքում համապատասխան շտկումներ առաջադրում համապատասխան փուլի իրականացնող մարմիններին:

Այսպիսով, նորարարական քաղաքականությունը իրենից ներկայացնում է անընդհատ գործընթաց: Այն երբևէ չի դադարում. պարզապես նորարարական քաղաքականությունն ընդգրկող տարբեր միավորներ տարբեր ակտիվությամբ են մասնակցում ընթացիկ գործընթացին: Եթե տվյալ արտադրատեսակը բավարարում է շուկայի ներկա բոլոր պահանջները, միևնույն է, նորարարական քաղաքականություն իրականացնող կենտրոնական օղակը անընդհատ վերահսկում է շուկայից ստացվող տեղեկատվությունը՝ շուկայական փոփոխություններին առաջինը արձագանքելու պահանջի նկատառումներով:


Նորարարական քաղաքականությունն իրականացնող կենտրոնական օղակը կատարում է ձեռնարկությունում իրականացվող նորարարական քաղաքականության արդյունավետության գնահատում, այսինքն, թե ինչքանով է ստանձնած գործունեությունը համապատասխանում ձեռնարկության հնարավորություններին, և արդյոք ձեռնարկությունը բավարար նպատակով պայմաններ ապահովում է ձեռնարկությունում աշխատանքների արդյունավետ իրականացման համար¹:

Որոշ հեղինակներ նորարարական գործընթացից հրաժարվելը նկարագրում են որպես առանձին փուլ, սակայն, մեր կարծիքով, հրաժարումը կամ օգտագործման դադարեցումը նպատակահարմար չէ նկարագրել որպես առանձին փուլ, որովհետև նորարարական քաղաքականությունից հրաժարվելը կարող է տեղի ունենալ ցանկացած պահի և ցանկացած փուլի ընթացքում, և այն որպես առանձին փուլ նկարագրելը հիմնավոր չէ (ավելի նպատակահարմար է այն նկարագրել որպես գործընթաց):

Ներֆիրմային նորարարական քաղաքականություն իրականացող մարմնի (կենտրոնի) առանձնացումը և կառավարման տարբեր մակարդակներում իրականացվող քաղաքականությունների ձևերից տարանջատումը պայմանավորված է նորարարություններին վերաբերող ոլորտի կառավարման առանձնահատկություններով և բարդությամբ: Եթե ձեռնարկությունում վարվող մարկետինգային քաղաքականությունը զբաղվում է իրացման հետ առնչվող խնդիրներով, կադրային քաղաքականությունը՝ կադրերի ընտրման և վերապատրաստման հարցերով, ապա նորարարական քաղաքականությունը առնչվում է ձեռնարկության բոլոր ենթաօլորտներին: Բնականաբար, տարբեր ոլորտներում վարվող քաղաքականությունները որոշակի ձևով առնչվում են, սակայն մյուս կայերը նորարարական ձեռնարկություններում պարտադիր կերպով պետք է ամուր փոխկապակցված լինեն: Այդ պատճառով ավելի նպատակահարմար է ձեռնարկության ներսում ունենալ առանձին օղակ, որը կհամախմբի բոլոր նորարարական գործընթացների ներդաշնակությունը: Նման առանձին օղակի կապերը ձեռնարկության կառավարման մյուս օղակների հետ սխեմատիկորեն ներկայացված է Գծանկար 3-ում:

Գծանկար 3-ում տեղակատվական հոսքերը հորիզոնական են և երկկողմանի ու ցանկացած ոլորտից եկած ազդակը կարող է ազդել մյուս բոլոր ոլորտների վրա:

¹ Մարկոսյան Հ., «Դեղագործական ձեռնարկությունում նորարարական քաղաքականության արդյունավետության գնահատումը», Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, #9 (73), Օգոստոս 2006, էջ 122-126:



Գծանկար 3. Նորարարական քաղաքականությունն իրականացնող կենտրոնական օղակի տեղը ձեռնարկության կառուցվածքում

Ինչպես ցույց է տալիս իրականությունը, ձեռնարկություններում նորարարական ակտիվության մակարդակը հազվադեպ է համապատասխանում ցանկալի մակարդակին: Նման պատկերը հատկապես խիստ է արտահայտվում խոշոր ձեռնարկություններում և գլխավորապես կապվում է նորարարությունների բնույթի ոչ լիարժեք ընկալման և համապատասխան կազմակերպչական կառուցվածքի բացակայության հետ: Ձեռնարկությունում ներդրված նորարարական քաղաքականության իրականացման համակարգը պետք է հնարավորություն տա պահպանել բարձր մոտիվացիա և վերջնական սպառողի հետ անմիջական կապ, հիմքեր ստեղծի զարգացման այլընտրանքային հեռանկարների և բարձրակարգ աշխատուժի հնարավորությունների ամբողջական և լիարժեք օգտագործման համար, ներառի աշխատանքների կատարման վերահսկողության՝ ստեղծագործ ոգուն համապատասխան համակարգ¹: Առաջարկվող կազմակերպչական կառուցվածքը համապատասխանում է այս չափանիշներին և նպատակ ունի ցույց տալ այն սկզբունքային լուծումները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել գիտատար ձեռնարկություններում կազմակերպչական կառուցվածքի նախագծման կամ բարեփոխումների իրականացման ժամանակ:

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. բ.

ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՆԵՐԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Բժշկագիտությունը, այդ թվում և դեղագիտությունը, Հայաստանում հին արմատներ ունի: Ուրարտական և ավելի վաղ շրջանների հնագիտական պեղումների արդյունքները վկայում են Հայկական լեռնաշխարհի տարածքում բժշկության բարձր մակարդակի մասին: Պեղումների արդյունքում պարզվել է, որ Հայաստանում արդեն III դարում եղել են մասնավոր հիվանդանոցներ: Հայկական բժշկագիտության վաղ շրջանների պատմության մասին արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Մովսես Խորենացու, Թովմա Արծրունու, Ղազար Փարպեցու և այլ հայագի պատմիչների աշխատանքներում: Մի շարք պատմիչներ իրենց աշխատանքներում հիշատակում են հայտնի հայագի բժիշկների մասին, որոնք հարգանք էին վայելում թե՛ Հայաստանում և թե՛ Հայաստանից դուրս²:

Հայաստանում բժշկագիտության զարգացմանը նպաստել են ոչ միայն հայկական գիտական մտքի

¹ Егоршин А.П. Управление персоналом: учебник, 5-е изд., перераб. и доп. Новгород, НИМБ 2005. 720с.

Сергеев И.В. Экономика предприятий. Уч. пособие, 2-е изд. М., Финансы и статистика 2000, 304 с.

Труханович Л.В. Кадры предприятия. 300 образцов должностных инструкций. М., Дело и сервис 2000, 880с.

² Ստեփան Վարդանյան: Հայաստանի բժշկության պատմություն. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Երևան, «Քննատեք» 2000, 440 էջ: